

Կույն Եղոյն

1274

Զարեան Եղոյն

1911

891-71-93
4-79

1002
9552



ՀԱՐՄԱՆԱԿ ԱՐԴ
Թարգմ.
օր. Ն. Ղուլիջանեան

ՀԱՅ.Լ. ՀԱՐԱՅԻՆ ԳՐԱԳՈՐԾ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/11. 1922
ИМЕНА, МАСНИКИ
Ա. ՄՅԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Մոսկրոսնեան փող. № 13.
Тип. „ГЕРМЕСЪ“ Мухр. ул. № 13.
1911

20 04

5953

897. A-43

4-79

us


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԶԱՐԲԱՆԱԼԻ ՈՐԴ

Հայաստանի ԽՍՀ
Հանրապետության
Համաժողովրդական
Դեմոկրատիկական
Համակարգի մասին
Հարգելի ժողովրդական
հասարակության
անդամներ, երիտասարդներ
և երեխաներ, իմ հարգանքներս
հասնում են Ձեզ։

257
— 0

530
60-40




Փորրիկ Նւարդն ու իր
մայրը ապրում էին քաղաքում:
Սրանց տան առաջ մի գեղեցիկ
պարտէզ կար: Բացի շատ տե-
սակ ծաղիկներից պարտիզում
կային՝ մի քանի պաղատու ծառեր էլ՝ տանձի,
կեռասի, ծիրանի և սև ու սպիտակ մատաղ
թթենիներ: Նւարդը շատ էր սիրում
թթենիները, որովհետև նրանց վրայի
քաղցր թուփը շուտ էր հասնում: Թթենի-

087
 Գները ցածրիկ էին և փուլած՝ այդ պատճառով էլ նա շատ հեշտ էր հասնում պտուղներին: Տան մէջ ոչ ոք չէր սիրում թութը, դրա համար էլ միայն Նւարդն էր օգտուում նրանցից և քաղցրացնում իր բերանը: Բայց ցաւն այն էր, որ թթան հիւթը կեղտոտում էր փոքրիկ աղջկայ թէ ձեռքերը, թէ սպիտակ գոգնոցները և թէ բաց գոյն շորերը, որի պատճառով էլ մայրը միշտ բարկանում էր նրա վրայ:

Եւ ի՞նչու անուշ չանէր, քանի որ այդ համեղ պտուղները այնքան մօտիկ էին կախած, որ քիչ էր մնում իրանք ընկնէին նրա պստիկ բերանը: Ուստի նա մեծ ախորժակով բաց էր անում իր բերանը և կուլ տալիս թթան հատիկները մէկը միւսի յետեից՝ մոռանալով որ պէտք է մաքուր պահէ իր հագուստը: Նւարդը շատ էր սիրում զուգել և շատ էր հաւանում իր նոր գլխարկը, նամանաւանդ վրայի վարդագոյն ժապաւէնը: Երբ նա առաջին անգամ տեսաւ այն ժապաւէնը, միանգամ

մայն հիացաւ և միշտ հարց ու փորձ էր անում մօրը, թէ որտեղից են ստանում և ինչից են պատրաստում ժապաւէնները: Մայրն ասաց աղջկան, որ ժապաւէնը պատրաստում են մետաքսից, իսկ մետաքսը տալիս է մեղ շերամի որդը: Պէտք էր տես-



նել Նւարդի ծիծաղը: Նա կարծեց, թէ մայրը կատակ է անում՝ ուզենալով գլխից հեռացնել իրան: Այդ պատճառով էլ ոչինչ

չհարցրեց, վագեց իր տիկնիկներին մօտ:
Մայրը նկատեց, որ աղջիկը չհաւատաւաց իր
ասածին, բայց սչինչ չասաց, այլ մտքովը
մի բան անցկացրեց:

* * *

Գարնանային տաք օրերից մէկն էր.
Նւարդը հէնց նոր ուզում էր զնալ պարտէզ
վազվզելու, երբ տեսաւ մօրը սենեակ
մօնելիս. նա ձեռքին մի կտոր թուղթ
ունէր: Նւարդը հետաքրքրուող աղջիկ էր:
Մի րոպէ չանցած՝ նա արդէն մօր կողքին
կանգնած ուշադրութեամբ գննում էր այն
թուղթը, որի վրայ խաշխաշի նման մի բան
էր փռած:

—Ի՞նչ ես անելու այդ խաշխաշը, մայ-
րիկ, հարցրեց նա:

—Ապա լաւ նայիր, պատասխանեց
մայրը, գուցէ խաշխաշ չէ:

Իրաւ որ, Նւարդը լաւ նայելուց յետոյ՝
նկատեց, որ սերմերը բոլորովին կլոր չէին,
մէջ տեղին ունէին մի փոքր փոս ընկած
տեղ, որ խաշխաշի վրայ չկայ:

—Ապա սա ի՞նչ բան է, հարցրեց նա:

—Սրանք ձւիկներ են:



—Ո՞ր մայրիկ, դու ինձ հետ շարունակ
կատակ ես անում: Ես տեսել եմ շատ տե-
սակ ձւիկներ՝ հաւերի, բագերի և ուրիշ շատ
թուչունների, բայց նրանք իսկի նման չեն
սրանց:

—Նրա համար է քեզ այդպէս թւում,
որդիս, որովհետեւ դու տեսել ես թուչունների
ձւեր, իսկ թիթեռի ձու չես տեսել:

—Ի՞նչ ես ասում: Միթէ թիթեռնիկ-
ներն էլ են ձու ածում. նրանց ձւիկներին
ի՞նչներ են դուրս գալիս:

—Համբերութիւն ունեցիր և ինքդ կը
տեսնես: Իսկ այժմ տաններ այս ձւիկները
ապակեայ վերնատուփը և փոներ պատու-
հանի տուփ, որ արեւը լաւ տաքացնէ:

Նւարդը հետեւեց մօրը, մի անգամ էլ աչքի անցկացրեց ձւիկները և ապա վաղեց պարտէզ, որտեղ ծառերն արդէն սկսել էին ծաղկել:

Արեւն այնքան պայծառ էր լուսաւորում և թռչուններն այնպէս սիրուն էին ծլւում, որ փոքրիկ աղջիկը չգիտէր թէ ուրախութիւնից ինչ անի: Երկար ժամանակ վազվզեց նա պարտէզում, գնաց սրահը, ուր թուխան իր դեղին ճուտերի հետ զբօսնում էր և տուն դարձաւ միայն այն ժամանակ, երբ չափից դուրս յոգնել ու քաղցել էր:



Դեռ չնախաճաշած, նա յիշեց փոքրիկ ձւիկները և գնաց տեսնելու: Նրանք գեռ անշարժ թափւած էին թղթի վրայ միկնոյն դրութեան մէջ: Նւարդը շատ էր հետա-

բքբրւում, թէ ինչ պէտք է դուրս գայ այն փոքրիկ սերմերից: Միւս առաւօտը հազիւ կիսով չափ հազնւած՝ վազեց, որ տեղեկանայ, թէ ինչպէս են նրանք: Հէնց որ մօտեցաւ պատուհանին՝ իսկոյն նկատեց խիտ մազերով ծածկւած փոքրիկ սև որդեր: Նրանց մօտ թափւած էին ձւիկների սպիտակ ու բարակ կճեպները, որոնցից դուրս էին եկել որդերը: Բայց դրանք բոլորը չէին:

Ձւիկների մի մօտը թափւած էր անշարժ, իսկ միւսներից որդերը, կողքից ծակեր բանալով, սկսել էին դուրս գալ:

Նւարդը դեռ լաւ չգիտած՝ վազեց մօր մօտ:

— Մայրիկ, մայրիկ, կանչեց նա ներս վազելով սենեակը, արե՛ վերև. տես՝ թէ ինչեր են դուրս եկել ձւիկներից: Նա մօր ձեռքը բռնեց ու տարաւ վերնասրահ:

— Գիտես, մայրիկ, ես կարծում էի, թէ այս ձւիկներից փոքրիկ թիթեռնիկներ պիտի դուրս գան, իսկ այստեղ որդեր են երևում:

— Համբերիր, դստրիկս, հեթը թիթեո-
նիկներին էլ կրհասնի: Սյժմ վաղիր պարտէզ
և պոկիր թթենու կանաչ, թարմ տերևներ:

— Ի՞նչ պիտի անես տերևները:

— Իսկոյն կրտսնեա. դէ, շուտ վաղիր.
չէ՞ որ թէյը մեզ է սպասում:

Փոքրիկ աղջիկը գնաց ու շտապով յետ
դարձաւ՝ ձեռքերը լի կանաչ, թարմ տերևնե-
րով: Մայրը նրանցից մի քանի հատ վեր-
ցրեց և դարսեց որդերի կողքին: Նրանք
շատ շուտ իմացան տերևների հոտը,
մօտ սողացին և սկսեցին եռանդով ուտել:
Նւարդին այս բանը շատ դուր եկաւ:

Նա մի գլուխ նրանց տակը թարմ տե-
րևներ էր դարսում, այնպէս որ մայրը չէր
կարողանում նրան տուն տանել թէյ խմեց-
նելու: Երբ նրանք արդէն գնում էին,
մայրն ասաց աղջկանը, «այժմ օրտկան մի
քանի անգամ պէտք է որդերի համար
թարմ տերևներ բերես, Նւարդ. հօ մտահան
չես անիլ»:



— Ո՛չ մայրիկ, չեմ մոռանալ, միամիտ
կաց, ես այնպէս սրտով կպած եմ որդերին,
որ երբէք սոված չեն մնալ նրանք:

Նա ճշտութեամբ կատարեց իր խոստու-
մը, և առաջին օրերը դեռ հարկաւոր
եղածիցն էլ աւելի էր բերում և ուրախա-
նում, որ գոնէ որդերը հաւանում են իր
սիրած թթենու տերևը: Նա մեծ սիրով էր
բաժանում որդերին թթենու տերևները.
բայց հազիւ թէ նոյնպիսի սիրով բաժանէր

նրանց պտուղները, որոնք քիչ էր մնացել, որ հասնէին: Նւարդը փորձեց ուրիշ ծառերի տերեւներից էլ բերել. բայց տեսաւ, որ թթե-
նու տերեւներից զատ ուրիշ բան չեն ուտում իր որդերը: Թարմ տերեւները մի քիչ հեռու էր դնում հին տերեւներից. բոլոր որդերը սողալով անցնում էին թարմ տե-
րեւների վրայ. իսկ հինների մնացորդները նա հաւաքում էր առանց անհանգիստ անելու իր փոքրիկներին—այսպէս էր կո-
չում նա որդերին, բայց մայրն ասաց, որ նրանք թրթուրներ են կոչւում:

Նւարդն այսպէս կերակրեց թրթուրներին հինգ օր: Նա ուրիշ գործեր էլ ունէր անելու. պարտէզում մարգերի ծաղիկներին պէտք է նայէր, տիկնիկներին դուրս տանէր գրօմնե-
լու, չէ՞ որ խեղճերն ամբողջ ձմեռը փակւած էին ներսը: Բայց նա այդ բոլորը մի կողմն էր ձգում, հոգ տանելով մանր որդերի մասին, որոնք յանձնւած էին իրան: Նւարդը լաւ էր իմանում, որ եթէ նրանց չկերակրի, խեղճերը սոված կըմնան, ուստի

կանաչ տերեւներով լի գամբիւղը ձեռքին վազում էր նրանց մօտ:

*
*
*

Որդերն այդ միջոցում շատակեր դար-
ձան ու շատ էլ մեծացան. նրանց մաշկը սևից շագանակագոյնի փոխւեց, իսկ վեցե-
րորդ օրւայ դէմ նրանք ընկոյզի գոյն ստա-
ցան: Այդ օրն առաւօտը Նւարդը եկաւ նրանց մօտ և սաստիկ վախեցաւ, երբ տե-
սաւ, որ որդերի մեծ մասը գլխները ցցած՝ անշարժ ընկած, ոչինչ չեն ուտում: Նա
զնաց մօր մօտ ու արտասուքն աչքերին ասաց:

—Ո՛հ, մայրիկ, բոլոր որդերս սատկել են. անփոստ, ի՛նչպէս էի նրանց խնամում. հաւատա՛, մայրիկ, որ ոչ մի անգամ առանց թարմ տերեւների չեմ թողել:

Բայց մայրը որդերին նայելով՝ ասաց.

—Հանգստացիր, նրանք ամենն էլ ողջ են և առողջ, միայն կամեցել են քնել և ահա քնել են:

—Այդ ի՛նչու սրանք առաջ այդ ձևով չէին քնում:

—Յիշմամ ես, որքան սրանք մանրէին
և այս կարճ միջոցում սրճափ մեծացան:
Քանի նրանք մեծացան, այնքան նեղացաւ
նրանց վրայի շորը—մաշկը. այժմ այնքան
քնած կըմնան որդերն այս մաշկի տակ, մին-
չև գուրս կըգայ մի նորը, եղած մաշկը
կըտրաքւի և նրանք գուրս կըպրծնեն նրա
միջից:

Ուղիղ որ այգուէս էլ եղաւ. Նւարդը
նոյն օրը տեսաւ, որ որդերն սկսեցին
պտտել գլխիկները: Այդ միջոցին նրանց
վրայի մաշկը տրաքտրաքւեց և նրանք իրան-
ցից դէն ձգեցին այդ: Այսպէս նրանք
գունափոխեցին: Մի ժամից յետոյ որդերն
սկսեցին ուտել. բայց սկզբում քիչ էին
ուտում: Օրէցօր նրանք շատակեր էին դառ-
նում: Նրանց մաշկի գոյնը մոխրագոյն
դարձաւ, իսկ վրայի մազերը համարեա թէ
անյայտացել էին: Նրանք այնքան արագ
էին մեծանում և այնչափ ուտում, որ
Նւարդը զարմանքից մնացել էր ապշած:
Տարաբախտաբար նրա գամբիւղը մեծ չէր,



այդ պատճառով ստիպւած էր շուտ շուտ
տերևի համար պարտէզ վազելու: Երբեմն
շատ էլ յոգնում էր, բայց այնքան էր փա-
փագում իմանալ թէ վերջն ի՞նչ է լինելու,
որ առանց տրտունջի առաջ էր տանում իր
գործը:

*
*
*

Հինգ օրից յետոյ որդերը դարձեալ
քնեցին, բայց այս անգամ արդէն Նւարդը
չվախեցաւ, այլ հասկացաւ, որ նրանք նորից
փոխելու են իրանց զգեստը: Ծիշա որ սրանից
յետոյ որդերը բաց մոխրագոյն դարձան, իսկ
նրանց վրայի մազերը բոլորովին անյայտացան:
Նրանք մի գլուխ մեծանում էին, աւելի ճեղմա-
կում և շատակեր դառնում: Նւարդը

այլևս «մանրիկներ» չէր անւանում նրանց, այլ շատ ուտելու պատճառով կոչում էր «շատակերներ»: Պէտք է այս էլ ասած՝ որ նրանք արդէն սկսել էին փոքրիկ աղջկան ձանձրացնել. նա յաճախ ասում էր մօրը.

—Այսչափ տերև եմ բերում հա բերում, բայց սրանք ուտելուց չեն կշտանում:

—Սպասիր, հոգեակս, շուտով դրանք ուտելուց կը դադարեն, այն ժամանակ դու մի նոր հետաքրքիր բան կը տեսնես:

Այժմ որդերն այնպէս էին խոշորացել, որ կարելի էր նրանց լաւ դիտել:

Նւարդը նկատեց, որ նրանց ամբողջ




մարմինը բաղկացած է տասը հատ օղակներից: Նրանք առջևից ունէին երեք զոյգ ոտներ, իսկ մէջտեղն ու յետևը հինգ զոյգ, որոնք աւելի հաստ էին և ծայրին աւլածն

մազեր ունէին, որոնցով կաշում էին տերևներին: Ինններորդ օղակի վերևից ցցւած էր մի փոքրիկ եղջիւր:

*
* *

Վերջապէս թրթուրները մոմի պէս թափանցիկ դարձան. նրանք անհանգիստ էին երեւում, բոլորն էլ գլխները պտտում էին և աշխատում աւելի բարձր տեղ թառ լինել: Մայրն ասաց Նւարդին, որ գնայ թթնու մի քանի ձիւղեր բերի ու ցցի որդերի առաջը: Որդերը, որոնք մինչև այժմ միմիայն շարժւում էին անցնելով կրծած տերևից դէպի նորը՝ կարծես թէ զթօսնել ուզեցին: Ահա ոստի վրայով բարձրացաւ մի որդ, նրան հետևեց երկրորդը, բարձրացան և ուրիշները. բոլորն էլ կարծես դիտում էին ամեն մի ոստ՝ կանգ առնելով և ընտրելով աւելի յարմար տեղ: Ահա արդէն վերևն կանգ առան և ուզում են ինչ որ գործ սկսել: Նրանք ոլորում են գլխներն ամեն կողմ և մի քանի տեղ էլ զիպչում են ոստերին: Աւելի մօտիկից նայելով՝ Նւարդը նկատեց, որ



Նրանք կպել են ոտներին մի բանի բարակ ուտայնաման թելերով: Թելերն աւելի ու աւելի շատանում էին և թրթուրները կարծես թէ փաթաթւում էին նրանցով: Բայց սրտեղից էին վերցնում թելերը: Մայրը պատմեց Նւարդին, որ այն թելերը գոյանում են նրանց մարմնի մէջ և դուրս են դալիս բերանից:

Նւարդը երկար ժամանակ զարմացած նայում էր, թէ ինչպէս են թրթուրները գալարւում, գլխները շարժում ու թելով փա-

թաթւում, և չէր հասկանում թէ ինչո՞ւ համար են այդպէս անում:

Հետեւալ օրը նա այլ ևս թրթուրներ չտեսաւ. նրանց տեղը դեղին ձւաձև կծիկներ էին՝ աղաւնու ձւից մի քիչ մօտը:

Այդ միջոցին վերնատուն մտաւ մայրը: — Տես, մայրիկ, գոչեց աղջիկը, թրթուրներն այլ ևս չկան:

— Այն, դատրիկս, թրթուրները մնացել են իրանց հիւսած կծիկների մէջ. ահա այդ կծիկները կոչւում են բոժոժներ:

— Ինչո՞ւ են նրանք այնտեղ մտել և ինչպէս պէտք է դուրս գան:

— Նրանք բոժոժների մէջ վերջին անգամ կըքնեն և ապա նրանց մաշկից դուրս կըգայ ոչ թէ թրթուր, այլ հարսնեակ:

— Հարսնեակ:

— Այո, ժպտալով ասաց մայրը:

— Ե՞րբ կըտեսնեմ նրան:

— Նա կոկոնից երբէք չի դուրս գայ, բայց եթէ դու սրտով ուզում ես նրան տեսնել, մենք մի հատը կըկտրենք, բայց հիմա չէ, սրովհետեւ թրթուրը գեռ ևս իբր գործը չի վերջացրել:


Իսկ Նւարդի գործը վերջացել էր ար-

դէն՝ այլ ևս ոչ ոքի չէր կերակրելու: Սկըզբում թէև նա ձանձրանում էր շուտ շուտ տերևներ բերելուց և նրանց մնացորդները հաւաքելուց, բայց այդ միջոցին այնչափ սիրել էր իր սանկիներին, որ հիմա տխրում էր առանց նրանց: Նւարդը գնում էր նայելու բոժոժներին և տեսնելով, որ նրանք անշարժ են, սարսափում էր, կարծելով թէ կոկոնների միջի թրթուրները սատկել ու փչացել են: Այժմ նրան մխիթարում էին թթենու պտուղները, որ արդէն հասել էին: Նւարդն ինչպէս առաջ, այժմ էլ առանց նազ անելու քաղցրացնում էր իր բերանը համեղ պտուղներով:

Մի բանի օրինց յետոյ մայրը վեր առաւ մի հատ կոկոն, կտրեց ու ցոյց տւեց Նւարդին:

Փոքրիկ աղջիկը տեսաւ նրա մէջ մի բան, որ բոլորովին նման չէր թրթուրի: Սա մի փոքրիկ կինամոնագոյն բան էր՝ կազմւած մի բանի օղակներից ու գլխի նման բանից, բայց ոչ աչքեր ունէր և ոչ զառներ: Նւարդը կարծում էր, թէ մի գեղեցիկ բան

կտեսնի. հարսնեակը բոլորովին դուր չեկաւ նրան: Մինչև անգամ նրան թւաց, թէ հարսնեակը շունչ չունի: Մի փոքր լուսթիւնից յետոյ նա հարցրեց մօրը:



—Նրանք ի՞նչ են անում կոկոնի մէջ:

—Քնած են և քնած կըմնան կոկոնի մէջ, մինչև որ նրանց հետ մի արտասովոր բան կըպատահի: Բայց այդ բանի համար պէտք է դու մի առ ժամանակ սպասես:

* * *

Նւարդն արդէն սպասելուց ձանձրացել էր: Այս դէպքից յետոյ, նա մի երկու անգամ մտել էր վերնասարահը: Մի անգամ էլ հէնց որ դուռը բացեց, Նւարդի աչքովն ընկան մի քանի սպիտակ թիթեռներ, որոնք պտտւում էին պատուհանի գլխին:

—Սրանք ձրտեղից բուսան, զարմանալով հարցրեց Նւարդը:

—Լաւ նայիր, պատասխանեց մայրը,

ազջկան ասնելով գէպի կօկոնները, — շատ
կարելի է ինքդ էլ հասկանաս:



Նւարդը նկա-
տեց, որ մի քանի
կոկոնների վրայ
ծակեր կան, իսկ
մէջները դատարկ է:

— Մի՞թէ այս տգեղ հարս-
նեակներինքն են դուրս եկել
այդ գեղեցիկ թիթեռները,
— բացականչեց նա: — Բայց ի՞նչպէս են դուրս
եկել այնտեղից:

— Նրանք իրանցից արձակել են այն-
պիսի մի կծու հիւթ, որից կոկոնի այն
տեղն այլու է, և ծակ է գոյացել, ահա այն
ծակից են դուրս եկել թիթեռները:



Նւարդը մի քանի ժամանակ ուրա-
խանում էր նրանցով, յետոյ առանց մի բառ
արտասանելու վազեց պարտէզ: Մի րոպէից
յետոյ նա դարձաւ պարտիզից թիթեռու տե-
րեններով ու դարսեց թիթեռների առաջը:
Այս բանը տեսնելով մայրը ծիծաղեց և
ասաց.

—Ձուր ես աշխատել, հոգեակս, սրանք քո բերած տերևները չեն ուտիլ:

—Ապա ի՞նչ տամ սրանց, մայրիկ:

—Ոչինչ:

—Ի՞նչպէս թէ ոչինչ: Մի՞թէ սրանք կարող են առանց կերակրի ապրել:

—Այո, սրանք ոչինչ չեն ուտում և դեռ երկար ժամանակ չեն ուտիլ:

* *

Հետեւեալ օրը Նւարդը տեսաւ պատուհանի առաջ դրած թղթի վրայ շատ փոքրիկ մոխրագոյն ձւիկներ, հէնց այն տեսակ, որ պիսիններից դուրս էին եկել որդերը: Թիթեռները երեք օր ձուածելուց յետոյ՝ սատկեցին: Նւարդը շատ էր ցաւում նրանց համար, բայց ի՞նչ կարող էր անել: Նա հաւաքեց բոլոր ձւիկներն ու կոկոնները, տարաւ մօր մօտ ու հարցրեց.

—Այս ձւիկներին էլ նոյնպիսի որդեր դուրս կը գան:

—Այո, բայց ոչ հիմա, այլ առաջիկայ տարւայ գարնանը: Եթէ զրանց չոր ու

սառը տեղ պահես, դու կունենաս թէ թրթուրներ և թէ թիթեռներ:

—Իսկ կոկոններն ի՞նչ պէտք է անենք:

—Դու կարող ես այդ կոկոններն ընծայել քո բոլոր ծանօթներին և պատմել, թէ որտեղից են զրանք ստացւել: Իսկ եթէ մենք այդ տեսակներից շատ ունենայինք, այն ժամանակ գործարան կը հիմնէինք ու ժապաւէններ, թաւիշ և ուրիշ շատ տեսակ մետաքսեայ կտորներ կը պատրաստէինք:

—Ի՞նչ ես ասում, մայրիկ, այդ ամենն ի՞նչպէս կանէինք:

—Այ, լսի՛ր թէ ինչպէս են անում այդ գործարաններում. երբ թրթուրները կոկոններ են հիւսում և կոկոնների մէջ գոյանում են հարսնեակներ, այն ժամանակ կոկոնները հաւաքում, դարսում են տաք վառարանի մէջ:


—Ոհ, մայրիկ, չէ՞ որ հարսնեակները նրա մէջ կը սատկոտեն:

—Իհարկէ, հէնց զրա համար էլ դնում են վառարանը:

—Այն ժամանակ այլ ևս թիթեռներ

չեն լինիլ, ախար դէմքով առաց նւարդը:


— Թիթեռները կոկոններից դուրս գալիս փչացնում են կոկոնները, որովհետեւ այն ծակը, որ շինում են նրանք դուրս գալու համար՝ կարատում է թելերը: Սակայն կոկոնների մի մասը թողնում են, որ նրանցից թիթեռներ դուրս գան և ձու ածեն յաջորդ տարւայ որդերի համար: Բոժոժները



փառարանից հանելուց յետոյ ձգում են կէծ ջրի մէջ:

— Իսկ այդ ինչու համար են անում:

— Չէ որ ամեն մի կսկսն հիւսւած է կէս, իսկ երբեմն էլ մի վերստ երկար մետաքսայ թելից: Այդ թելի շարքերն իրար կպած են սոսինձով: Կէծ ջրի մէջ սոսինձը բացւում է և այն ժամանակ կարելի է լինում թելը յետ տալ: Դրա համար աւելով խփում են կոկոններին, վերևի թելերը կպչում են աւլին, այդպիսով գտնում են երկու կամ մի քանի կոկոնների ծայրերը և հաւաքելով փաթաթում են ճախարակի վրայ: Իսկ որովհետեւ թելերը շատ բարակ են լինում, մի քանիսը միասին



են ոլորում կամ մանում: Հէնց այս թելերիցն է, որ ոստայնի վրայ զանազան կաորներ են գործում:

—Ա՛խ, մայրիկ, որչափ զարմանալի
են իմ որդերը: Ուրեմն դու հանաք չէիր
անում, երբ ասում էիր թէ ժապաւէնը
պատրաստած է շերամի թելից: Հապա իմ
մետաքսեայ թաշկինակը, քո մետաքսեայ ձեռ-
նոցները: Նրանք էլ են դրանից պատրաստած:

—Այո, սիրելիս, նրանք էլ, և ուրիշ
շատ պէսպէս ու օգտաւէտ առարկաներ էլ:
Այժմ կարող ես պատմել ընկերուհիներիդ,
թէ ի՞նչպէս քո գործարանում մետաքս
պատրաստեցին քեզ համար քո փոքրիկ
բանւորները—շերամի որդերը:



1274

530
60-40

0005363

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0005363

